Հաստատված է՝
Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդին առընթեր
Գիտա-վերլուծական կենտրոնի խորհրդի 27.02.2015թ. թիվ 02-Ա որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԱՐԱ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԵՎ ՎԱԼԵՆՏԻՆԱ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԳՐԱՎՈՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
(AMICUS CURIAE)

№ 02-15-Ա

27.02.2015թ. ք. Երևան

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ Պալատ) խորհրդին առընթեր գիտա-վերլուծական կենտրոնի (այսուհետ՝ Կենտրոն) խորհուրդը,

քննարկելով ՀՀ սահմանադրական դատարանում քննության ընդունված *«Արա Սարգսյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության նախկին օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ՀՀ վարչական դատավարության գործող օրենսգրքի 72–րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 154-րդ հոդվածի 4-րդ մասի, 158-րդ հոդվածի 5-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» և «Քաղաքացի Վալենտինա Մկրտչյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 4-րդ մասի, 407-րդ հոդվածի 5-րդ մասի և 414.1-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ»* գործերով ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը,

տալիս է սույն գրավոր մեկնաբանությունները հետևյալի մասին.

* * *

➢ ***<u>Հարցի կարևորությունը.</u>***

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանում 2015 թվականի մարտի 3-ին և մարտի 17-ին քաղաքացիներ Արա Սարգսյանի և Վալենտինա Մկրտչյանի **(այսուհետ նաև Դիմողներ)** անհատական դիմումներով Դիմողների կողմից բարձրացված իրավական խնդիրը վերաբերվում է անձի դատական պաշտպանության իրավունքին, որի շրջանակներում շոշափվում է վճռաբեկ ատյանում միայն փաստաբանների միջոցով իրականացվող դատական ներկայացուցչությանը (պաշտպանությանը) վերաբերող հարց:

* * *

➢ ***<u>Միջամտության (մեկնաբանության շրջանակը).</u>***

Վիճարկվող նորմերի սահմանադրականության հարցը պարզելու համար, կարծում ենք, անհրաժեշտ է դրանք դիտարկել ՀՀ սահմանադրությամբ սահմանված դատական պաշտպանության իրավունքի, արդար դատաքննության և արդարադատության մատչելիության համատեքստում՝ պատասխանելով հետևյալ հարցադրումներին՝

ա) ինչպիսի՞ն է դատական պաշտպանության իրավունքի, արդար դատաքննության իրավունքի և արդարադատության մատչելիության բովանդակությունը.

բ) արդյո՞ք ՀՀ վարչական դատավարության և ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքերով միայն փաստաբանի միջոցով վճռաբեկ բողոք բերելու իրավունքի սահմանումը համապատասխանում է ՀՀ սահմանադրությանը.

* * *

➢ ***<u>Դատական պաշտպանության, արդար դատաքննության իրավունքի և արդարադատության մատչելիության բովանդակությունը.</u>***

1. ՀՀ սահմանադրական դատարանն իր 2006թ. հոկտեմբերի 18-ի ՍԴՈ-652, 2006թ. նոյեմբերի 16-ի ՍԴՈ-665, 2007թ. ապրիլի 9-ի ՍԴՈ-690 և մի շարք այլ որոշումներով բազմիցս անդրադառնալով արդարադատության մատչելիության և արդյունավետության խնդիրներին, առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 1, 3, 14, 18, 19, 42, 43 և այլ հոդվածներով, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի, միջազգային իրավական այլ փաստաթղթերում ամրագրված հիմնադրույթներով, վկայակոչելով նաև ժողովրդավարության զարգացման միջազգային փորձն ու Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան, կարևորել է անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար նորմատիվ իրավական բավարար նախադրյալների ստեղծումն ու զարգացումը՝ հատկապես միջազգային այն պարտավորությունների շրջանակներում, որպիսիք Հայաստանի Հանրապետությունն ստանձնել է Եվրոպայի խորհրդի առջև: Միաժամանակ, կարևորվել է այդ պարտավորություններից բխող ներպետական հայեցողական որոշակի ազատությունն արդարադատության մատչելիության և, հատկապես՝ դատական բողոքարկման իրավունքի օրենսդրական սահմանափակումների հարցում:

2. Դատական պաշտպանության իրավունքն իր ամրագրումն է գտել մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում, այդ թվում՝ «Մարդու

իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» 1950թ. եվրոպական կոնվենցիայում և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական նախադեպերում: Այս իրավունքի հիմնական բովանդակությունը հանգում է անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության համար դատարան դիմելու իրավունքի երաշխավորմանը և պետության կողմից այդ իրավունքի իրացման համար արդյունավետ միջոցների և պայմանների ստեղծման պարտականությանը:

3. Անձի իրավունքների ապահովման ու պաշտպանության տեսանկյունից Սահմանադրության 18 հոդվածի նպատակն իրավունքների խախտումների մասին անձի պնդումների դատական քննության և այդպիսի խախտումների հետևանքները վերացնելու իրավունքի երաշխավորումն է: Այդ իրավունքը սահմանափակման ենթակա չէ, և արդար դատավարության իրավունքը ցանկացած ժողովրդավարական հասարակության հիմնական հատկանիշներից մեկն է[1]:

4. Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է, մի դեպքում, օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից, իրավակիրառողի պարտականությունն՝ առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից:[2]

5. ՀՀ սահմանադրության՝ դատական պաշտպանության իրավունքն ամրագրող 18-րդ հոդվածը ՀՀ սահմանադրական դատարանի դատական պրակտիկայում, որպես կանոն, վկայակոչվում է 19-րդ հոդվածի հետ սերտ միասնության մեջ՝ որպես իրենից մեկ միասնական իրավական երևույթ ներկայացնող: Դա մասնավորապես վերաբերում է արդարադատության մատչելիության իրավունքին՝ որպես արդար դատաքննության իրավունքի տարրի, որի սահմանադրական ամրագրումը դիտարկվում է 18 և 19-րդ հոդվածներում՝ միաժամանակ և միասնաբար՝ չկոնկրետացնելով դրա սահմանադրական-տեքստային հիմքը[3]:

6. ՀՀ սահմանադրության 19-րդ հոդվածում ամրագրված

---

[1] ՀՀ սահմանադրական դատարան, 2007թ. հունվարի 16, ՍԴՈ-673, 8-րդ կետ:
[2] ՀՀ սահմանադրական դատարան, 2007թ. նոյեմբերի 7, ՍԴՈ-719, 6-րդ կետ:
[3] ՀՀ սահմանադրության մեկնաբանություններ, *Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի ընդհանուր խմբագրությամբ,* Երևան, 2010, էջեր 222-223:

արդարադատության մատչելիության իրավունքի՝ որպես արդար դատաքննության իրավունքի տարրի հիմնարար սահմանադրական երաշխիքներն են՝

ա) դատական քննության հավասարություն և արդարացիություն,
բ) անկախ և անկողմնակալ դատարան,
գ) դատական քննության ողջամիտ ժամկետ և
դ) հրապարակայնություն:

7. Արդար դատաքննության իրավունքի և արդարադատության մատչելիության վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Դատաքննության իրավունքը, որի մասնավոր տարր է հանդիսանում մատչելիության իրավունքը, չի հանդիսանում բացարձակ իրավունք և կարող է ենթարկվել որոշակի սահմանափակումների, հատկապես, բողոքի ընդունելիության պայմանների առնչությամբ, քանի որ այն իր էությամբ պահանջում է պետության կողմից կարգավորում, որը կարող է փոփոխվել՝ կախված ժամանակից և տեղից, ինչպես հասարակության, այնպես էլ կոնկրետ անձանց պահանջմունքներին և միջոցներին համապատասխան: Պետություններն այս առնչությամբ օգտվում են հայեցողության ազատությունից: Այնուամենայնիվ, դատարանի մատչելիության իրավունքը չի կարող սահմանափակվել այնպես և այն սահմաններով, որ վնասի նրա էությունը, և դրանք համապատասխանում են Կոնվենցիայի 6 հոդվածի 1-ին կետին, եթե ունեն օրինական նպատակ և կիրառված միջոցների և դրված նպատակի միջև գոյություն ունի արդար հավասարակշռություն»[1]:

8. Եվրոպական դատարանը միաժամանակ գտնում է. «Բողոք ներկայացնելու համար սահմանված ժամկետների կարգավորումը, անկասկած, նպատակ ունի ապահովել արդարադատության պատշաճ իրականացումը, հատկապես իրավական որոշակիության սկզբունքը: Շահագրգռված անձինք պետք է հաշվի առնեն, որ այդ կանոնները պետք է կիրառվեն»[2]:

9. Ավելացնենք նաև, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք վճիռներում առանձնահատուկ կարևորել է, որ պետությունները պարտավոր են իրենց ներպետական օրենսդրությամբ անհրաժեշտ իրավական նախադրյալներ ստեղծել անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար:

---

[1] Golder v. United Kingdom, 21 feb. 1975, Fayed v. United Kingdom, 25 aug. 1994, Ashingdane v. United Kingdom, 28 may 1985, Garcia Manibardo v. Spain (15 feb. 2000), 29.06.2000, Bellet v. France, 20 nov. 1995, Philis v. Greece, 27 aug. 1991, Tolstoy Miloslavsky v. United Kingdom, 23 jun. 1995:

[2] Perez de Rada Cavanilles v. Spain, 28 oct. 1998, Societe anonyme "Sotiris et Nikos Kouras ATTEE" v. Greece (16 nov. 2000), 16 feb. 2001:

10. Այսպիսով, ՀՀ սահմանադրության 18 և 19-րդ հոդվածներով ամրագրված դատական պաշտպանության իրավունքի և արդար դատաքննության էությունը անձի իրավունքների և ազատության պաշտպանության համար դատարան դիմելու իրավունքի սահմանումն է և այդ իրավունքի պատշաճ իրականացման համար պետության կողմից գործուն մեխանիզմների և մատչելի պայմանների ստեղծումն ու երաշխավորումը:

* * *

➢ ***<u>ՀՀ վարչական դատավարության և ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքով միայն փաստաբանի միջոցով վճռաբեկ բողոք բերելու իրավունքի սահմանադրականության վերաբերյալ.</u>***

11. Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության գործող օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝
4. Ֆիզիկական և իրավաբանական անձինք վճռաբեկ բողոք կարող են բերել միայն փաստաբանի միջոցով:

12. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝
4. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված անձինք վճռաբեկ բողոք կարող են ներկայացնել միայն փաստաբանի միջոցով:

13. Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակը և վճռաբեկ դատարանում վարույթի առանձնահատկությունների վերաբերյալ իրավական դիրքորոշում է հայտնել ՀՀ սահմանադրական դատարանն իր 2007թ. ապրիլի 9-ի ՍԴՈ-690 որոշմամբ:

14. Նշված որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը մասնավորապես նշել է. *«Սահմանադրական դատարանը գտնում է, որ սահմանադրաիրավական վերոհիշյալ նորմերի ընդհանուր բովանդակությունից հետևում է. **...գ) ընթացիկ օրենսդրության խնդիրն է նյութական և ընթացակարգային նորմերի միջոցով սահմանել ու մանրամասնել ինչպես ՀՀ վճռաբեկ դատարանի սահմանադրական կարգավիճակից բխող, այնպես էլ ընդհանուր իրավասության և մասնագիտացված ստորադաս դատարանների լիազորությունների շրջանակը, իրականացման <u>կարգն ու պայմանները</u>...»:***

15. Նույն որոշման մեջ ՀՀ սահմանադրական դատարանը, մեջբերելով Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 1995 թվականի փետրվարի 7-ի թիվ R (95) 5 հանձնարարականը, նշել է, որ *«երրորդ ատյանի դատարանում բողոքները պետք է վերաբերեն այնպիսի*

գործերի, որոնք բխում են այդ դատական ատյանի դերից, օրինակ, այնպիսի գործեր, որոնք «...կարող են նպաստել իրավունքի զարգացմանը կամ կարող են նպաստել օրենքի միատեսակ մեկնաբանմանը: Այդ շրջանակը կարող է սահմանափակվել այնպիսի գործերով բողոքարկումներով, որոնք առնչվում են ամբողջ հասարակության համար նշանակություն ունեցող իրավունքի հարցերին» (հոդվ. 7): Դիմողից պետք է պահանջվի հիմնավորել, թե ինչով է իր գործը նպաստելու հասնել այդ նպատակներին:Միջազգային պրակտիկան վկայում է նաև, որ այդ նախապայմանների խստացումը չպետք է տեղի ունենա անհամաչափ՝ անձանց համար ստեղծելով իրավունքների պաշտպանության խոչընդոտներ: Բացի դրանից, վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելու հարցում դատարանները պետք է ունենան ոչ թե հայեցողական անսահմանափակ ազատություն, այլ՝ ***օրենսդրորեն նախատեսված, հստակ, և անձանց համար միակերպ ընկալելի հիմքերով,*** *բողոքը վարույթ ընդունելու կամ մերժելու իրավունք և պարտականություն»:*

16. Նույն գործով Սահմանադրական դատարանը կարևորել է ՀՀ վճռաբեկ դատարանում իրավասու անձանց վճռաբեկ բողոքների քննության ընթացակարգային կանոնների օրենսդրական այնպիսի կանոնակարգման անհրաժեշտությունը, որոնք, օրինական նպատակ հետապնդելով հանդերձ, լինեն միակերպ ընկալելի և մատչելի՝ ապահովելու համար այդ նպատակի և կիրառվող միջոցների միջև արդար հավասարակշռությունը: Միաժամանակ, վճռաբեկ բողոքների քննության ընթացակարգային կանոններն արդարացիորեն կարող են պարունակել միայն այնպիսի սահմանափակումներ, որոնք պայմանավորված են ՀՀ վճռաբեկ դատարանի արդարադատական գործառույթի բովանդակությամբ, կապված ոչ թե մասնավոր, այլ՝ *«...ամբողջ հասարակության համար նշանակություն ունեցող իրավունքի հարցերի», «...օրենքի միատեսակ մեկնաբանման», դատական գործերով փաստական առանձնահատուկ հանգամանքների, դրանց գնահատման խնդրի, նյութական և ընթացակարգային իրավանորմերի ճիշտ կիրառումն ապահովելու հետ»:*

17. Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 1995 թվականի փետրվարի 7-ի թիվ R (95) 5 հանձնարարականում **(այսուհետ՝ Հանձնարարական)** հատուկ շեշտվել է, որ վճռաբեկ վարույթում բողոքները պետք է վերաբերեն այնպիսի գործերի, որոնք, բխելով դատական տվյալ ատյանի կարգավիճակից, ***կարող են նպաստել իրավունքի զարգացմանը*** կամ ***կարող են նպաստել օրենքի միատեսակ մեկնաբանմանը***: Այդ բողոքարկումները կարող են սահմանափակվել նաև այնպիսի գործերով, որոնք առնչվում են ամբողջ հասարակության համար նշանակություն ունեցող իրավունքի հարցերին, ուստի դիմողից պետք է պահանջվի հիմնավորել, թե իր գործն ինչո՞վ է

նպաստելու հասնել այդ նպատակին:

18. Կենտրոնը՝ վիճարկվող իրավական նորմերը դիտարկելով դատական պաշտպանության իրավունքի, ինչպես նաև ՀՀ սահմանադրական դատարանի վերոնշյալ իրավական դիրքորոշումների համատեքստում, արձանագրում է, որ դրանցով միայն փաստաբանի միջոցով վճռաբեկ բողոք ներկայացնելու կարգավորումը սահմանափակում է անձի դատական պաշտպանության իրավունքն այն առումով, որ պարտավորեցնում է անձին իր խախտված իրավունքի վերականգնման համար դատական պաշտպանության իրավունքից օգտվելու դեպքում դիմել փաստաբանի, ինչն իր հերթին անձի համար կարող է առաջացնել լրացուցիչ ֆինանսական պարտավորություն:

19. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 20-րդ հոդվածով երաշխավորված իրավական օգնություն ստանալու իրավունքը վերապահված է բացարձակապես բոլոր անձանց: Նշված սահմանադրական նորմը երաշխավորում է, որ ***յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Օրենքով նախատեսված դեպքերում իրավաբանական օգնությունը ցույց է տրվում պետական միջոցների հաշվին:...***

20. Իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը՝ որպես անձի հիմնարար իրավունք, դասվում է մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված միջոցների շարքին, քանի որ այն երաշխիք է հանդիսանում Սահմանադրությամբ ամրագրված այլ իրավունքների, այդ թվում՝ իրավունքների դատական կամ արդյունավետ պաշտպանության այլ միջոցներից օգտվելու իրավունքի իրացումն ապահովելու համար:

21. Քննարկվող նորմում սահմանադրի կողմից օգտագործված ***«յուրաքանչյուր ոք»*** եզրույթն ինքնանպատակ չէ: Դա նշանակում է, որ այս իրավունքը վերապահված է ***յուրաքանչյուր մարդու***՝ անկախ որևէ հանգամանքից, և այն ենթակա չէ սահմանափակման կախված անձի մասնագիտությունից և/կամ գործունեության բնույթից:

22. Սակայն, անձի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը ոչ բոլոր դեպքերում է ապահովվում պետական բյուջեի միջոցների հաշվին, այսինքն՝ ***անվճար անվճար շահառուի (իրավական օգնություն ստացող անձի) համար***:

23. Հանրային պաշտպանության կարգով պետական բյուջեի միջոցների հաշվին տրամադրվող անվճար իրավական օգնություն ստացող անձաց շրջանակը սահմանափակ է այն առումով, որ նշված իրավունքից կարող են օգտվել միայն «Փաստաբանության մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված սոցիալական խմբերի մեջ ներառվող անձինք:

24. Մնացած այլ դեպքերում անձն իրավաբանական օգնություն ստանալու իր իրավունքն իրացնում է ***իր միջոցների հաշվին***, ինչի հաշվառմամբ Վիճարկվող նորմերով միայն փաստաբանի միջոցով վճռաբեկ բողոք բերելու հանգամանքն ինքնանպատակ անձին պարտավորեցնում է դիմել փաստաբանին, վերջինիս հետ կնքել համապատասխան պայմանագիր, ինչը դեպքերի գերակշիռ մասում անձի համար կառաջացնի լրացուցիչ ֆինանսական պարտավորություն, այն առումով, որ վերջինս փաստաբանին պետք է վճարի պայմանագրով նախատեսված հոնորարը: Իսկ փաստաբանին դիմելու բավարար ֆինանսական միջոցներ չունենալու և հանրային պաշտպանության ենթակա սոցիալական խմբի մեջ չներառվելու դեպքում ***անձը զրկված կլինի իր իրավունքների դատական պաշտպանության իրավունքից:*** Նման մոտեցումը Կնետրոնի համոզմամբ իրավաչափ չէ, քանի որ արդարացված շահ չի հետապնդում***:***

25. Կենտրոնի համոզմամբ վիճարկվող իրավական կարգավորումները (ՀՀ վարչական դատավարության նորմի մասով) կարող են խնդիր առաջացնել նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրենց իրավասության սահմաններում քննվող դատական գործերով: Խնդիրը կայանում է նրանում, որ հատկապես քաղաքացիաիրավական շրջանառությունում պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հավասարեցված են իրավաբանական անձանց իրավական կարգավիճակին այն առումով, որ օգտվում են իրավաբանական անձանց համար սահմանված իրավունքներից և պարտականություններից՝ հաշվի առնելով իրենց առանձնահատկությունները:

26. Վարչական դատավարության կարգով դատական ներկայացուցչությունը միայն փաստաբանի միջոցով կատարելու իրավակարգավորումն առերևույթ պարտավորեցնում է համապատասխան մարմնին վճռաբեկ ատյանում դատական գործով որպես բողոք բերող անձ հանդես գալու պարագայում փաստաբանի հետ կնքնել ծառայությունների մատուցման պայմանագիր կամ որպես հաստիքային աշխատակից ունենալ փաստաբանական գործունեության արտոնագիր ունեցող իրավաբան: Սակայն, փաստաբան հաստիքային աշխատակից ունենալու դեպքում վիճարկվող իրավակարգավորման համաձայն վճռաբեկ բողոք ներկայացնելը գործնականում նույնպես խնդրահարույց է, քանի որ «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով հանրային ծառայության (այդ թվում՝ համայնքային ծառայության) մեջ գտնվող փաստաբանի համար նախատեսված է փաստաբանական գործունեության ***արտոնագրի կասեցման պարտականություն***, որի

պայմաններում տվյալ փաստաբանը չի կարող որպես փաստաբան իրականացնել «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով նախատեսված գործառույթները (այդ թվում՝ դատական ներկայացուցչությունը) անկախ համապատասխան մարմնի աշխատակից լինելու հանգամանքից:

27. Վիճարկվող նորմերով նախատեսված կարգավորումների առումով կարելի է համեմատական անցկացնել նախկինում գործող *հավատարմագրված փաստաբանների ինստիտուտի* հետ, որի սահմանադրականության հարցով ՀՀ սահմանադրական դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել 08.10.2008 թիվ ՍԴՈ-765 որոշմամբ:

28. Մասնավորապես՝ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է. *«Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ հստակ ձևավորված նախադեպային իրավունքի համաձայն՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան Պայմանավորվող պետություններին չի պարտադրում ստեղծել վերաքննիչ կամ վճռաբեկ դատարաններ, այնուամենայնիվ, եթե ստեղծվել է, պետք է ապահովվի, որ շահագրգիռ անձինք այդ դատարաններում ևս օգտվեն Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված՝ արդար դատաքննության հիմնարար երաշխիքներից, այդ թվում՝ նաև քաղաքացիական իրավունքների և պարտականությունների կապակցությամբ դատարանի մատչելիությունը: Այն հանգամանքը, թե 6-րդ հոդվածը որքանով է կիրառելի վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանների առնչությամբ, կախված է այդ դատարաններում վարույթի առանձնահատկություններից, դիտարկվելով իր ամբողջության մեջ՝ հաշվի առնելով վճռաբեկ դատարանի առանձնահատուկ կարգավիճակը (տես՝ Սիալկովսկան ընդդեմ Լեհաստանի գործով (Sialkowska v. Poland) 2007թ. մարտի 22-ի վճիռը):... ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորվող դատական պաշտպանության իրավունքը ներառում է նաև վճռաբեկ դատարանում անձի իրավունքների պաշտպանության իրավունքը, որն իր հերթին ներառում է վճռաբեկ ատյանի մատչելիության իրավունքը, որը պետք է ապահովվի՝ հաշվի առնելով վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակը և վճռաբեկ դատարանում վարույթի առանձնահատկությունները»:*

29. Սահմանադրական դատարանն իրավական պետության սկզբունքների և արդարադատության մատչելիության իրավունքի համատեքստում առանձնակիորեն կարևորել է վճռաբեկ դատարանի մատչելիության իրավունքը, քանի որ վերջինիս որոշումները՝ պայմանավորված այդ դատարանի սահմանադրական գործառույթներով, կարևորվում են ոչ միայն դատավարության կողմերի շահերի տեսանկյունից, այլ նաև ողջ հանրության շահերի տեսանկյունից:

30. Սահմանադրական դատարանն արձանագրել նաև, որ *պայմանավորված վճռաբեկ դատարանի գործառնական առանձնահատկություններով՝* ***փաստաբանի միջոցով վճռաբեկ դատարան դիմելու պահանջը կարող է իրավաչափ համարվել,*** *եթե բխում է ֆիզիկական և իրավաբանական անձանց շահերից՝ ներկայացուցչությունն իրականացնելով արհեստավարժ և փորձառու մասնագետների միջոցով:*

31. Սահմանադրական դատարանը միաժամանակ ընդգծել է, որ փաստաբանի միջոցով վճռաբեկ դատարան դիմելու ինստիտուտը՝ որպես այլընտրանքային տարբերակ, իրավաչափ կարող է համարվել միայն այն դեպքում, երբ օրենսդրությունը փաստաբանի ծառայությունից օգտվելու հնարավորությունը երաշխավորի յուրաքանչյուրի համար՝ անկախ տվյալ անձի ֆինանսական հնարավորություններից[1]:

32. Քրեադատավարական և քաղաքացիադատավարական օրենսդրության զարգացման պատմությունը և ներկայիս դատավարական օրենսդրական կարգավորումները վկայում են այն մասին, որ օրենսգրքերով սահմանված վճռաբեկ բողոք բերելու հիմքերը, կարգը և պայմանները, ինչպես նաև բողոքը քննության ընդունելու պայմաններն օրենսդրական փոփոխությունների արդյունքում ժամանակակից կարգավորումներով բավականին խստացվել են, ինչի նպատակը վճռաբեկ դատարանի գործունեության արդյունավետության բարձրացումն է՝ անհիմն բողոքների մուտքը վճռաբեկ դատարան կանխելու և դրանով իսկ դատարանին անտեղի ծանրաբեռնվածությունից ազատելու միջոցով:

33. Վճռաբեկ դատարանի՝ ՀՀ սահմանադրությամբ սահմանված և ՀՀ սահմանադրական դատարանի դիրքորոշումներում մեկնաբանված սահմանադրաիրավական կարգավիճակը և գործունեության կարգի (վճռաբեկ դատարանում վարույթի) առանձնահատկությունները՝ կապված վճռաբեկ դատարանի կողմից օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու և իրավունքի զարգացմանը նպաստելու գործառույթների հետ, պահանջում են վճռաբեկ դատարանի մատչելիության իրավունքի իրացման առանձնահատուկ, առաջին և երկրորդ ատյաններում իրավունքի իրացման ձևերից տարբերվող իրավակարգավորումների մշակում: Ընդ որում, վճռաբեկ դատարանում դատական պաշտպանության և դատարանի մատչելիության իրավունքի իրացման ձևերի ներդրումն ու կատարելագործումը պետք է իրականացվի օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու և իրավունքի զարգացմանը նպաստելու վճռաբեկ դատարանի գործառույթների բովանդակությունը հաշվի առնելով:

34. Դատավարական օրենսդրության զարգացման ժամանակակից փուլում

[1] ՀՀ սահմանադրական դատարան, 08.10.2008 թիվ ՍԴՈ-765 որոշում, կետ 18:

քրեական, քաղաքացիական և վարչական դատավարական օրենսգրքերում վերանայվել է վճռաբեկության կարգով դատական ակտերի բողոքարկման ինստիտուտը և սահմանվել է բացառապես փաստաբանի միջոցով վճռաբեկ բողոք բերելու իրավունքի իրացման հնարավորությունը:

35. Սակայն Կենտրոնի դիրքորոշմամբ նման իրավական կարգավորումը և վճռաբեկ դատարան դիմելու իրավունքի իրացման նոր ձև սահմանելու օրենսդրի այդպիսի մոտեցումն իրավաչափ չէ և չի բխում մարդու իրավունքներից, մասնավորապես՝ դատական պաշտպանության և դատարանի մատչելիության սահմանադրական պահանջից, վճռաբեկ դատարանի գործառույթների առավել արդյունավետ իրականացման ապահովման անհրաժեշտությունից: Վիճարկվող իրավակարգավորման պարագայում իրավունքի զարգացմանը կամ օրենքի միատեսակ մեկնաբանմանը նպաստելու վճռաբեկ դատարանի նպատակի և վճռաբեկ դատարան դիմելու իրավունքի սահմանափակման միջոցի (միայն փաստաբանի միջոցով) միջև, մեր կարծիքով, չկա ողջամիտ հավասարակշռություն, և այդ սահմանափակուումը անհամաչափորեն խոչընդոտում է վճռաբեկ դատարանի մատչելիության իրավունքի պատշաճ իրականացմանը:

36. Պետության, իրավունքի և հասարակության զարգացման ժամանակակից մակարդակը թույլ չեն տալիս վճռաբեկ դատարան դիմելու իրավունքի իրականացումը միջնորդավորել բացառապես փաստաբանի միջոցով: Միայն փաստաբանների միջոցով վճռաբեկ բողոք բերելու ինստիտուտի ազդեցությունը վճռաբեկ դատարանի մատչելիության իրավունքի վրա գնահատելիս՝ հարկ է հաշվի առնել հատկապես պետական միջոցների հաշվին իրավաբանական օգնություն ստանալու օրենքով սահմանված հնարավորությունը և դրա գործնական կիրառությունը պրակտիկայում:

37. ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի 1-ին մասի ընկալմամբ՝ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը ներառում է, նախ՝ որակյալ իրավաբանական ծառայություն ստանալու հնարավորությունը, երկրորդ՝ պետության պարտավորությունը՝ որակյալ իրավաբանական օգնություն ստանալու հնարավորություն ապահովելու բոլոր նրանց համար, ովքեր ի վիճակի չեն ինքնուրույն ստանալ այդպիսի օգնություն: Պետության նշված պարտավորությունը ենթադրում է, որ բոլոր այն դեպքերում, երբ անհրաժեշտ է փաստաբանի պարտադիր ներկայացուցչություն կամ այն բխում է դատավարության շահերից, յուրաքանչյուր կարիքավոր պետք է իրավունք ունենա ստանալու իրավաբանական որակյալ օգնություն: Դա բխում է արդարադատության իրականացման բնագավառում իրավաբանական ծառայության մատուցման եվրոպական փորձից, ինչպես նաև իրավաբանների և

իրավաբանական ծառայության մատչելիության վերաբերյալ ՄԱԿ-ի շրջանակներում ընդունված սկզբունքներից[1]:

38. Սակայն դատավարական օրենսգրքերով ֆիզիկական կամ իրավաբանական անձանց վճռաբեկ բողոք բերելու իրավունքի սահմանափակումը և *միայն փաստաբանի միջոցով* այդպիսի բողոք բերելու հնարավորության նախատեսումը չի բխում ներպետական օրենսդրության գործող կարգավորումներից՝ վճռաբեկ դատարան դիմելու անձի իրավուքի իրացումը գործնականում, փաստորեն, պայմանավորելով նրա ֆինանսական հնարավորություններով:

39. Կենտրոնի համոզմամբ դատական ատյանին անհիմն կամ լրացուցիչ բողոքներից «բեռնաթափելու» քաղաքականությունը պետք է իրացվի այնպես, որ բացառվի ինքնանպատակ միջամտությունն անձի խախտված իրավունքի վերականգնման գործընթացին:

40. Վիճարկվող իրավակարգավորումն արդարացված կարող էր համարվել միայն այն դեպքում, եթե օրենսդրորեն յուրաքանչյուրի համար նախատեսվեր վճռաբեկ բողոք բերելու դեպքում փաստաբանի ծառայությունից անվճար օգտվելու հնարավորություն՝ պետական միջոցների հաշվին, և ապահովվեր յուրաքանչյուրի այդ իրավունքի գործնական իրականացումը պրակտիկայում՝ անկախ անձի ֆինանսական հնարավորություններից:

➢ ***<u>Եզրակացություն.</u>***

Ամփոփելով գրավոր մեկնաբանությունը, Կենտրոնը, միայն փաստաբանի միջոցով վճռաբեկ բողոք բերելու իրավունքի վերապահումը դիտարկելով դատական պաշտպանության իրավունքի համատեքստում գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության գործող օրենսգրքով, ՀՀ քրեական դատավարության, ինչպես նաև քաղաքացիական դատավարության օրենսգրքերով միայն փաստաբանի միջոցով վճռաբեկ բողոք բերելու իրավունքի նախատեսումն արդարացված շահ չի հետապնդում և խախտում է անձի արդար դատաքննության, դատական պաշտպանության և արդարադատության մատչելիության սահմանադրական իրավունքը:

Համակարգող՝ Լյուդվիկ Դավթյան

քարտուղար՝ Իրինա Փիլոյան

[1] ՀՀ սահմանադրական դատարան, 08.10.2008թ. թիվ ՍԴՈ-765 որոշում: